



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունվարի 2013 թվականի N 19 - ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԱՐԺԵՎՈՐԵԼՈՒ, ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-

ին մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել փաստաթղթերն արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու

կարգը` համաձայն հավելվածի:

2. Առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքային ենթակայության գրա-

դարաններում առկա գրադարանային փաստաթղթերը սույն որոշմամբ սահմանված կարգով ներկայացնել

Հայաստանի ազգային գրադարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունվարի 17

Երևան

Կ Ա Ր Գ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԱՐԺԵՎՈՐԵԼՈՒ, ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են գրադարանային փաստաթղթերն արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են գրավոր հուշարձանները, փաստաթղթի պարտադիր օրինակը և փորձաքննությամբ արժևորված փաստաթղթերը:

3. Հայաստանի ազգային գրադարանի տնօրենին կից ստեղծվում է գրադարանային փաստաթղթերն արժևորելու փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովը փորձաքննություն իրականացնող մարմին է, որի աշխատակարգը և անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարը (այսուհետ՝ նախարար): Հանձնաժողովը սույն կարգով սահմանված չափորոշիչներին ու պահանջներին համապատասխան տալիս է եզրակացություն ներկայացված գրադարանային փաստաթղթերն ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կամ մերժելու մասին:

4. Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն համարվող գրադարանային փաստաթղթերն

արժևորվում են հանձնաժողովի կողմից՝ սեփականատիրոջ հայտի համաձայն:

II. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն կարգում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **գրավոր սկզբնաղբյուրներ**՝ գրադարանային փաստաթղթեր, որոնց շարքին են դասվում տարեգրությունները, վիճակագրական նյութերը, կուսակցությունների փաստաթղթերը, հրատարակչության ստեղծագործությունները, անձնական գրագրությունը, հազվագյուտ գրքերը, բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործությունները և գրական ժառանգության միակ օրինակները, պետական և հասարակական, գիտության, արվեստի, մշակույթի գործիչների անձնական փաստաթղթերը, հայտնի դեպքերի հետ կապված վավերագրերի՝ իրենց տեսակի մեջ միակ օրինակները, որոնք առանձնանում են գիտական, պատմական և գեղարվեստական արժեքներով, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք տեղեկույթ են պարունակում յուրահատուկ երևույթների մասին և պահպանվել են մեկ օրինակով կամ սահմանափակ քանակությամբ.

2) **փորձաֆննդության արժևորված փաստաթուղթ**՝ գրադարանային փաստաթուղթ, որը սույն կարգով սահմանված չափաբաժնիչներին համապատասխան անցել է մշակութաբանական կամ արվեստաբանական հետազոտություն և փորձագիտական եզրակացության համաձայն պետք է ընդգրկվի (կամ չընդգրկվի) ազգային գրադարանային հավաքածուում.

3) *փաստաթղթի համալիր որոշարկում (ատրիբուցիա)*՝ գրադարանային փաստաթղթի բոլոր հատկանիւշերը՝

նյութի, ձևի, կազմության, չափսերի, պատրաստման միջոցի, տեխնիկայի, հեղինակային պատկանելության, թեմայի, սյուժեի, գաղափարական ուղղվածության, կիրարկման, սոցիալական և էթնիկական միջավայրի, պատմական, հուշային կամ այլ նշանակության բացահայտում:

III. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՁԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

6. Գրավոր փաստաթղթերն արժևորվում են հետևյալ չափորոշիչների համաձայն՝

1) գրավոր սկզբնաղբյուր՝ պատմական, բանահյուսական, գեղարվեստական, կրոնական, արվեստաբանական կամ գիտական վկայագիր-վավերագիր են.

2) համաշխարհային մշակութային գրավոր ժառանգության անբաժանելի բաղկացուցիչ մաս են.

3) հիշարժան փաստաթուղթ՝ ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության և պետության զարգացման, գիտության, ինչպես նաև նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների, ազգային հերոսների) կյանքին ու գործունեությանն առնչվող վավերագրեր են.

4) առաջնահերթ փաստաթուղթ՝ տվյալ ժամանակաշրջանի հրատարակության, տպագրության, տեխնիկայի և գրքակազմության առաջնեկ են:

7. Գրադարանային փաստաթղթի փորձաքննությունն իրականացվում է համալիր որոշարկման (ատրիբուցիա) հիման վրա, ինչի արդյունքում կբավարարվեն՝

1) գրավոր փաստաթղթի անվանման կամ անվան.

- 2) նկարագրության կամ բովանդակության, պարունակող տեղեկության ծավալի.
- 3) հեղինակի, թեմայի, սեռի և առանձնահատկությունների.
- 4) ստեղծման ժամանակի և տեղի.
- 5) տեսակային պատկանելության (տեխստային, թվանշանային, պատկերային, տեսա- և (կամ) ձայնաձայնային

կամ համակցված).

- 6) պատրաստման նյութի և տեխնիկայի.
- 7) չափսերի, ձևերի, կառուցվածքի.
- 8) հասարակական, էթնիկական, որոշակի պատմական կամ որևէ անձի պատկանելության.
- 9) փաստաթղթի պահպանվածության.
- 10) փաստաթղթի պատմամշակութային, գիտական, գեղարվեստական նշանակության համար

ներկայացվող պահանջները:

IV. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼԸ

8. Ազգային գրադարանային հավաքածուն կազմում և համակարգում է Հայաստանի ազգային

գրադարանը:

9. Ազգային գրադարանային հավաքածուում հնատիպ գրքերը և փաստաթղթի պարտադիր օրինակն ընդգրկվում

են առանց փորձաֆնության:

10. Հայաստանի ազգային գրադարանը, համաձայն «Փաստաթղթերի (վկայագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, որպես անվճար պարտադիր օրինակ ստացող, այդ գրադարանային փաստաթղթերի մասին սույն կարգի 7-րդ կետի չափանիշներով տեղեկություն ընդգրկում է ազգային գրադարանային հավաքածուի կազմում:

11. Պետական, հանրային գրադարանները (անկախ սեփականության ձևից և ենթակայությունից) պարտադիր, իսկ ոչ պետական և համայնային գրադարանները սեփական նախաձեռնությամբ՝ իրենց պահուցում առկա գրավոր հուշարձանը և փորձաֆնությամբ արժևորման ենթակա փաստաթուղթն ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու նպատակով, սույն կարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան, ներկայացնում են հայտ հանձնաժողովին:

12. Հանձնաժողովն ուսումնասիրում է յուրաքանչյուր ներկայացրած հայտը, և դրական եզրակացության դեպքում գրադարանային փաստաթղթի մասին տեղեկություն ընդգրկվում է ազգային գրադարանային հավաքածուում:

13. Իրավաբանական և ֆիզիկական անձն իր սեփականություն համարվող գրավոր հուշարձանի վերաբերյալ տեղեկություն ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու համար գրավոր համաձայնությամբ ներկայացնում է Հայաստանի ազգային գրադարան: Հայաստանի ազգային գրադարանը գրավոր հուշարձանի սեփականատիրոջ համաձայնության հիման վրա կազմում է նախարարի և գրավոր հուշարձանի սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի նախագիծը և հնգօրյա ժամկետում ներկայացնում է նախարարին:

14. Կողմերի միջև պայմանագիրն ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի ազգային գրադարանն իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն համարվող գրավոր հուշարձանն ընդգրկում է ազգային գրադարանային հավաքածուի կազմում:

15. Ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկված գրավոր հուշարձանի և փորձաֆնությամբ արժևորված փաստաթղթի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց Հայաստանի ազգային գրադարանը հնգօրյա ժամկետում տալիս է տեղեկանք ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկված լինելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԳՍԵՄԱՆ